

**Պարզաբանում «Հայկական ժամանակ» թերթում տպագրված «Գնանք Թիֆլիս, դեղ խմենք»
հոդվածի կապակցությամբ**

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է դեռևս 2010թ. և հինգ տարի շարունակ քննարկվել է ոլորտի շահագրգիռ բոլոր կազմակերպությունների և մասնագիտական միությունների ներկայացուցիչների հետ՝ ենթարկվելով բազմաթիվ լրամշակումների՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձագետների առաջարկություններն ու դիտողությունները՝ նպատակ ունենալով հանրապետությունում ապահովել անվտանգ, արդյունավետ, որակյալ դեղերի արտադրության, ներմուծման, իրացման և կիրառման պատշաճ իրականացումը, դեղերի մատչելիությունը, ինչպես նաև դեղերի մասին հավաստի տեղեկատվություն: «Հայկական ժամանակ» թերթի հոդվածում օրենքի նախագծի քննադատությունը հիմնավորված չէ և հետևանք է նախագծի ոչ լիարժեք ուսումնասիրության: Մասնավորապես. **«դեղերի գները թանկանալու և շուկայում մոնոպոլիա հաստատվելու»** մասին կանխատեսումը ամրագրվում է միայն «զուգահեռ ներմուծման հնարավորության իսպառ վերացմամբ», մինչդեռ, ընդհակառակը, օրենքի նախագիծը, օրենսդրական հիմքեր է ապահովում «զուգահեռ ներմուծման» իրականացման համար՝ սահմանելով «զուգահեռ ներմուծում» հասկացությունը և թույլատրելով այն: Դրա կարգը, առանձնահատկություններն ու մերժման դեպքերը պետք է սահմանվեն ՀՀ կառավարության կողմից: Հարկ է նշել, որ զուգահեռ ներմուծումը դեղերի մատչելիության ապահովման միակ գործիքը չէ և այս ճանապարհով հնարավոր է զսպել կամ նվազեցնել միայն սահմանափակ թվով դեղերի գները: Աշխարհին հայտնի են դեղերի գների կառավարման ավելի համակարգային մոդելներ, որոնցից առաջնահերթը դեղերի գների կարգավորումն է՝ դեղի հենակետային գնի, դրա նկատմամբ մեծածախ ու մանրածախ առավելագույն հավելագին սահմանելու միջոցով, ինչը ամրագրված է նաև ներկայացված նախագծում: Ինչպե՞ս պետք է դեղերի գների կարգավորման արդյունքում ձևավորվեն մոնոպոլիաներ՝ դեռևս ոչ ոք չի հիմնավորում, իսկ հակառակը ապացուցված է բազմաթիվ Եվրոպական երկրների փորձով: Նման քաղաքականության արդյունքում Եվրոպական երկրներին հաջողվել է զգալիորեն իջեցնել գները, և պատահական չէ, որ դեղերը զուգահեռ ներկրվում են հենց այդ Եվրոպական երկրներից:

Ինչ վերաբերում է Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի «անսահման իշխանությանը», ապա ինչպես գործող օրենքում, այնպես էլ նոր օրենքի նախագծում այդ կառույցի լիազորությունները սահմանված չեն, քանզի այն զուտ փորձաքննություն իրականացնող մարմին է, իսկ որոշումներ այս ոլորտում ընդունում է միայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը՝ առողջապահության նախարարությունը: Փորձագիտական կենտրոնն իր գործունեությունը, ներառյալ՝ գնումները, իրականացնում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան, որի մասին վկայում են նաև ինչպես առողջապահության նախարարության, այնպես էլ ֆինանսների նախարարության կողմից իրականացված ստուգումների արդյունքները:

Դեղերի փորձագիտական կենտրոնը «անիմաստ գրասենյակ» որակողն առնվազն չի պատկերացնում այն ծախսատար, ժամանակատար, բարդ ու պատասխանատու աշխատանքը, որն իրականացնում են կենտրոնի փորձագետները, այդ թվում՝ դեղաբանության, կլինիկական դեղաբանության, դեղագիտության, թունաբանության, քիմիայի, կենսատեխնոլոգիայի ավելի քան 80 փորձագետները: Փորձաքննությունը ներառում է ոչ միայն որակի լաբորատոր ստուգում, այլև որակի, անվտանգության և արդյունավետության գնահատում, ինչը պահանջում է բարձր որակավորում, երկարամյա փորձառություն և միջազգային համագործակցություն: Նման կառույցների գոյությունը ցանկացած երկրում ազգային անվտանգության ապահովման երաշխիք է, քանզի դեղի առանձնահատկություններից մեկն էլ հենց այն է, որ այն անհնար է գնահատել անզեն աչքով: Սպառողները դեղի մասին կարող են դատել, երբ արդեն այն կիրառել են և այն դրսևորել կամ չի դրսևորել որոշակի արդյունավետություն և անվտանգություն: Մինչդեռ դրա համար մենք հաճախ շատ թանկ կարող ենք վճարել՝ ոչ միայն ֆինանսապես, այլև չբուժված հիվանդությամբ և կողմնակի երևույթների դրսևորումով: Ուստի, պատահական չէ, որ դեղի ամբողջ կենսաշրջայում՝ ստեղծումից մինչև իրացում, առկա են տարբեր, այսպես կոչված «խոչընդոտներ», պատշաճ լաբորատոր, կլինիկական, արտադրական, բաշխման գործունեության պահանջներ, որոնք կան աշխարհի բոլոր երկրներում: Դրանք են՝ լիցենզավորում, գրանցում, արտադրության, ներմուծման, իրացման հսկողություն, հետգրանցումային մշտադիտարկում: Այս օղակներից ընդամենը մեկի թուլացումը կբերի անորակ դեղի շրջանառության, որը չի կարող գնահատվել սպառողի կողմից նախապես: Դեղերի առանձնահատկությունն է հարկադրում պետություններին խիստ հսկողություն սահմանել դրանց շրջանառության նկատմամբ, ընդունել առանձին օրենքներ և ստեղծել մասնագիտական կառույցներ: Այլապես լուրջ սպառնալիքներ կստեղծվեն ինչպես առողջապահական համակարգի, այնպես էլ ազգային անվտանգության համար:

Դեղի առանձնահատկություններից մեկն էլ հավաստի, սպառիչ և ըմբռնելի տեղեկատվության անհրաժեշտությունն է և սպառողի դեղակրթությունը, հակառակ դեպքում դեղի սխալ կիրառումը նույնպես կարող է առաջացնել անդառնալի հետևանքներ: Դեղերի ֆիզիկական մատչելիությունը չխոչընդոտելու համար գործող օրենսդրությունը չի պարտադրում դեղի գրանցման հավաստագրերի իրավատերերին պատրաստել հայերեն լեզվով փաթեթներ: Սակայն, հայերեն լեզվով կիրառման հրահանգի բացակայության պայմաններում չի կարող լինել ոչ միայն սպառողների, այլև առողջապահության ոլորտի մասնագետների կողմից դեղի պատշաճ կիրառման որևէ երաշխիք: Եվ, բնականաբար շատ են դեղսպառողների և բժիշկների բողոքներն անմատչելի տեղեկատվության վերաբերյալ:

Նոր նախագծում առաջարկվում է հաստատել և գրանցման հավաստագրին կցել հայերեն լեզվով կիրառման հրահանգ: Ընդ որում, լիազոր մարմինը կապահովի դրանց հրապարակայնությունը և տեղադրումը պաշտոնական ինտերնետային կայքում: Իսկ օրենքի ընդունումից հետո լիազոր մարմինը կսահամանի նաև իրացվող դեղերը հայերեն ներդիր-թերթիկով ապահովելու կարգ: Պետք է նկատի ունենալ, որ հայերեն տարբերակը շատ դեպքերում կարող է գրանցման հավաստագրի իրավատիրոջ կողմից տեղադրված լինել արտադրվող կամ ներմուծվող դեղի փաթեթում: Մնացած հնարավոր տարբերակները

քննարկումների փուլում են: Եվ դեռևս վաղ է միայն տնտեսվարողի շահերի տեսանկյունից դատելով նախագծի հեղինակներին մեղադրել «մասշտաբների մասին պատկերացումների» բացակայության մեջ: Համաձայնեք, որ ավելի բարդ է հայերեն ներդիրների մշակումը, քան պատրաստի ներդիրներով դեղերի ապահովումը: Չպետք է մոռանալ, որ օրենքի գերնպատակը սպառողի շահն է, որին պետք է ուղղված լինի նաև ոլորտում գործող ցանկացած սուբյեկտի գործունեությունը: Դեռևս չի ընդունվել որևէ օրինագիծ՝ առանց քննարկելու ոլորտի ներկայացուցիչների հետ: Առավել ևս «Դեղերի մասին» ՀՀ օրենքի նախագիծն այդ առումով առաջատարներից է: Արձանագրված են երեք տասնյակից ավելի քննարկումներ, ընդունվել են բազմաթիվ դիտողություններ և առաջարկություններ, ներկայացված են չընդունված առաջարկների բոլոր հիմնավորումները:

Իսկ «մի հաբ անալգին խմելու համար» Վրաստան գնալու կոչ անողներին պարզապես կցանկանանք հիշեցնել, որ վերջին տարիներին ՀՀ-ում հայտնաբերված երեք կեղծ դեղերը պաշտոնապես ներկրվում էին Վրաստանից, ընդ որում՝ պարտադիր նաև վրացերեն լեզվով ներդիր թերթիկով: